

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ АРМЯНСКОЙ ССР
ГОС. РЕСПУБЛИКАНСКАЯ БИБЛИОТЕКА АРМ. ССР им. АЛ. МЯСНИКЯНА
ОТДЕЛ КОМПЛЕКТОВАНИЯ

БИБЛИОГРАФИЯ АРМЯНСКОЙ ПЕРИОДИЧЕСКОЙ ПЕЧАТИ

(1794 — 1967)

СВОДНЫЙ УКАЗАТЕЛЬ

Составитель: А. КИРАКОСЯН

Редакторы и авторы предисловия:
Г. К. КОСТИКЯН и А. Г. СИЛЬВАНЯН

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ս Ս Հ Կ Ո Ւ Լ Տ Ո Ւ Բ Ա Յ Ի Մ Ի Ն Ի Ս Տ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ս Ս Հ Ա Լ Մ Յ Ա Ս Ն Ի Կ Յ Ա Ն Ի ա ճ վ ա ճ Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Գ Բ Ա Դ Ա Բ Ա Ն
Կ Ո Մ Պ Լ Ե Կ Տ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն

Հ Ա Յ Պ Ա Բ Բ Ե Բ Ա Կ Ա Ն Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(1794 — 1967)

Հ Ա Մ Ա Ն Ա Վ Ա Ք Ց Ա Ն Կ

Կ ա Վ Մ Ե ց ' Ա . Կ Ի Բ Ա Կ Ո Ս Յ Ա Ն
Խ մ ք ա գ ր ու թ յ ո ն և ա ռ ա ջ ա ք ա ն '
Հ . Կ Ո Ս Տ Ի Կ Յ Ա Ն Ի և Հ . Ս Ի Լ Վ Ա Ն Յ Ա Ն Ի



A 3762

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հարյուր յոթանասունհինգ տարվա պատմություն ունի հայոց մամուլը — հայ ժողովրդի մտավոր և հասարակական կյանքի բոլոր փուլերն ու հրապարակախոսության անցած ուղիներն արտացոլող նյութերի բազմահարուստ շտեմարանը:

Հսկայական է պարբերական մամուլի անդաստանը, նրա պատմությունն անխզելիորեն կապված է եղել հասարակական մտքի զարգացման հետ:

Հայոց պարբերական մամուլն արտացոլել է հայ ժողովրդի պատմական ուղին, այն կարևոր է ոչ միայն մեր ժողովրդի հոգևոր մշակույթի ուսումնասիրման, այլև հայ հասարակական մտքի զարգացման, նրա տարբեր հոսանքների գաղափարական պայքարի, հեղափոխական շարժումների պատմության տարբեր դրվագների լուսաբանման գործում:

Հայոց պարբերական մամուլը սկզբնավորվեց 18-րդ դարի վերջին Հընդկաստանում: 1794 թվականի հոկտեմբերին Մադրաս քաղաքում լույս տեսավ հայ անդրանիկ պարբերականը՝ «Ազդարար» ամսաթերթը:

Այնուհետև հայերեն պարբերականներ են լույս տեսել Իտալիայում, Քուրքիայում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Իրանում, Հունաստանում, Մերձավոր Արևելքում, Ֆրանսիայում և այլուր:

Հայոց պարբերական մամուլի մասին հրապարակի վրա են բազմաթիվ ուսումնասիրություններ, հոդվածներ և մատենագիտական աշխատություններ:

19-րդ դարի երկրորդ կեսին հայ պարբերական մամուլի վերաբերյալ հոդվածներ են տպագրվել «Բազմավեսլ», «Մշակ», «Արշալույս Արարատյան», «Արձագանք» և այլ պարբերականներում:

1850 թվականին Վիեննայում հրատարակվող «Եվրոպա» շաբաթաթերթում լույս է տեսնում Փիլիպոս Ճամանյանի հոդվածը՝ «Ազգային լրագիրներուն և օրագիրներուն պատմությունը» խորագրով:

Ռուսահայ պարբերական մամուլի պատմությանն է նվիրված Ն. Հարոյի (Նիկողայոս Տեր-Հարությունյանի) «Հայոց մամուլը Ռուսաստանում և Կովկասի մեջ» աշխատությունը (Քիֆլիս, 1878 թ.):

Մատենագիտական արժեքավոր տեղեկություններ կան Գարեգին Զարպ-հանալյանի «Հայկական մատենագիտություն» (Վենետիկ, 1883) աշխատու-թյան մեջ, ուր գրքերի հետ միասին հիշատակվում է նաև հայ պարբերական-ների մասին:

Հայ պարբերական մամուլի մասին քաղմաթիվ հիշատակություններ կան Արսեն Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» հանրահայտ մատենագիտության մեջ:

Հայ պարբերական մամուլի պատմության առավել մեծ ժամանակաշրջ-րան ընդգրկող ուսումնասիրություններից կարելի է հիշատակել Գրիգորիս Գալեմբյարյանի «Պատմություն հայ լրագրության ի սկզբանե մինչև մեր ժա-մանակը» աշխատությունը (Վիեննա, 1893): Այստեղ փորձ է արված ընդգրկել հայ լրագրության պատմությունը սկսած 1794—1860 թթ. Գ. Գալեմբյարյանի այս հետազոտությունը ոչ միայն պատմական տեսություն է հայ լրագրության, այլև մատենագիտական կարևոր աշխատություն է, որն աչքի է ընկնում տե-ղեկությունների ճշգրտությամբ և վստահելիությամբ: Այս աշխատության շա-րունակությունը հրատարակվեց «Հանդես ամսօրյա» պարբերականում՝ «Պատ-մություն հայ լրագրության 1860-են մինչև մեր օրերը» խորագրով: Հայ պար-բերական մամուլի պատմության և մատենագիտության քննադատում մեծ վաստակ ունի Գարեգին Լևոնյանը: 1895 թվականին Ալեքսանդրապոլում հրատարակվում է նրա «Հայոց պարբերական մամուլը. պատմական տեսու-թյան սկզբից մինչև մեր օրերը (1794—1894 թթ.) աշխատությունը: Այստեղ հայ լրագրության պատմական տեսության հետ միասին տրված է հայ պար-բերականների ժամանակագրական մատենագիտական ցանկը:

Խիստ արժեքավոր, ինքնատիպ մատենագիտական գործ է Մկրտիչ Պո-տուրյանի «Հայ մամուլը տասնհինգ տարուն մեջ» 1894—1909, (Վենետիկ, 1909) աշխատությունը: Սա Գ. Լևոնյանի վերը հիշված մատենագիտության շարունակությունն ու լրացումն է: Այս աշխատությունը բաժանված է երեք մասի՝ արտասահմանյան մամուլ, տաճկահայ մամուլ և ռուսահայ մամուլ. մատենագիտության մեջ նկարագրված են 33 անուն պարբերականներ, որոնք լույս են տեսել տասնհինգ տարում: Գրքում կարևոր և վստահելի տեղեկու-թյուններ է հաղորդվում պարբերականների պատմության, բովանդակության, անունների փոփոխման, խմբագիրների, պարբերականներին թղթակցած հա-սարակական գործիչների, գրողների մասին:

Ուշագրավ է, որ մատենագիտության մեջ տրված է պարբերականներում տպագրված հայագիտական քննությունների վերլուծական նկարագրու-թյունը, ինչպես նաև քաղմաթիվ բանաստեղծությունների տեքստերը: Մխի-թարյաններից Ռաֆայել Կարապետյանը (Քոստանը) Վիեննայի մատենադա-րանում գտնված հայերեն պարբերականների հավաքածուների հիման վրա կազմել է ներքոհիշյալ մատենագիտությունը՝ «Լիակատար ցուցակ հայերեն լրագիրներու, որսն կգտնվին Մխիթարյան Մատենադարանին մեջ ի Վիեննա 1794—1921» (Վիեննա, 1924): Հայ պարբերականների անուններով համե-մատարար հարուստ այս ցանկը լրիվ չի բավարարում մատենագիտության պահանջներին. չի նշված թերթի կամ ամսագրի ենթավերնագիրը, ում կողմից հրատարակված լինելը, խմբագիրը, տպարանը և այլ նաև տեղեկություն-

ներս Ինչպես կարելի է նկատել, հրապարակի վրա եղած մատենագիտական աշխատությունները մասնակի ընդգրկում ունեն։ Հայ պարբերական մամուլի լիակատար մատենագիտության պահանջը իրեն ամենուրեք զգացնել էր տալիս։

Այդ դժվարին ու պատվավոր գործին կրկին անգամ ձեռնամուխ եղավ անվանի րանասեր Գարեգին Առնյանը։ Տարիներ շարունակ Հայաստանի խոշոր գրապահոցների պարբերականների հավաքածուները ուսումնասիրելով, նա կազմեց և հրատարակեց «Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ ճայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794—1934)» մատենագիտությունը։

Ներկա մատենագիտության մեջ ընդգրկված են 1794—1934 թթ. բնթացքում Սփյուռքում և Սովետական Միությունում հրապարակված հայ պարբերականները։ Նկարագրված է ընդամենը 1596 հայերեն պարբերականներ և 21 հայատառ թուրքերեն լրագրեր։ Այստեղ ամսագրերը և լրագրերը դասավորված են ժամանակագրական կարգով, այսինքն ըստ պարբերականների հրատարակման տարեթվերի, իսկ յուրաքանչյուր տարվա շրջանակներում՝ ըստ անունների այբուբենի։

Նյութերի ժամանակագրական դասավորությունը իհարկե ընդունելի է նման բնույթի մատենագիտության մեջ, որը արտացոլում է հայ լրագրության պատմական ուղին։

Նախորդ մատենագիտությունների համեմատությամբ Գ. Առնյանի ներկա աշխատության մեջ յուրաքանչյուր պարբերականի մասին տրվում են անհրաժեշտ տվյալներ՝ ենթավերնագրերը, ում կողմից հրատարակվելը, հրատարակության վայրը, պարբերականությունը, անվան և պարբերականության հետ կապված փոփոխությունները, տպարանը, շափսը, ծավալը, խմբագիրները, հրատարակիչներ և այլն։

Արժեքավոր են մատենագիտության օժանդակ ցանկերը, որոնք բխում են նրա էությունից և օգնում են արագ կողմնորոշվելու մայր ցուցակում։ Այսպես օրինակ՝ «Հայոց պարբերական մամուլը ըստ հրատարակության վայրերի», «Խմբագիրների և հրատարակիչների այբբենական ցանկ», «Ցանկ հայ տպարանների, ուր տպագրվել են մեր պարբերականները», «Հայոց պարբերական մամուլը այբբենական կարգով»։ Բացի այդ տրված են «Հայոց պարբերական մամուլի քանակական ցուցանիշը ըստ թվականների» և «Հայերեն պարբերականներ ըստ բնույթի և բովանդակության» աղյուսակները։

Իր մեծ արժանիքներով հանդերձ, ներկա մատենագիտությունը լիակատար չէ, ինչպես ցույց տվեցին հետագա ուսումնասիրությունները բազմաթիվ պարբերականներ դուրս են մնացել այս ցանկից։

Ըստ հեղինակի վկայության նրա աշխատության համար իրական աղբյուրներ են եղել միայն 1179 պարբերականներ, իսկ մնացածները նա նկարագրել է տարբեր մատենագիտական և գիտական աղբյուրներից։ Հասկանալի է, որ նման պայմաններում անխուսափելի կլինեին անճշտություններն ու աղավաղումները։

Չնայած այս պակասություններին, Գարեգին Առնյանի կազմած ներկա մատենագիտությունը մնում է որպես արժեքավոր տեղեկատու ձեռնարկ հասկանալի և նախահեղափոխական հայ պարբերականների ուսումնասիրության համար։

Սովետահայ նշանավոր մատենագետ Հովհաննես Պետրոսյանի կազմած «Հայ պարբերական մամուլի բիրիոգրաֆիա» եռահատոր աշխատությունը ծավալով ամենամեծն է մինչ այդ հղածների մեջ:

Նրա նպատակն է հղել մատենագիտության մեջ տալ ոչ միայն պարբերականների սուկ նկարագրությունը, այլև նախահեղափոխական հանդեսների բովանդակությունը: Ներկա մատենագիտության առաջին հատորն ընդգրկում է 1794—1900 թթ. երկրորդը՝ 1900—1956 թթ., իսկ երրորդը՝ հայ բուլշեիկյան մամուլը 1902—1920 թթ. և սովետահայ մամուլը 1920—1954 թթ.:

Նյութերը նշված երեք հատորներում էլ (բացառությամբ սովետահայ ամսագրերից) դասավորված են ժամանակագրական կարգով, այսինքն՝ ըստ պարբերականների հրատարակության տարեթվերի, իսկ տարեթվի տակ նշված պարբերականները՝ այբբենական կարգով: Սովետահայ ամսագրերը դասավորված են ըստ թեմատիկայի:

Ծուրաքանչյուր պարբերականի մատենագիտական նկարագրությունից հետո, տրվում են ընդարձակ ծանոթագրություններ, ուր շոշափվում են նրա գաղափարական ուղղության հարցերը, երբեմն մեջբերումներ կատարվում լրագրի կամ ամսագրի ծրագրից, խմբագրական հոդվածներից, լուսաբանվում է նրանց հրատարակության պատմության հետ կապված որոշ հարցեր: Մանրագրությունից հետո նկարագրվում է ամսագրերում, երբեմն էլ երկշաբաթաթերթերում տպագրված հոդվածները: Նախահեղափոխական ամսագրերի բովանդակությունը բացահայտելիս և հոդվածները ընտրելիս, Հովհաննես Պետրոսյանը ելակետ է ունեցել նրանց գաղափարական, գիտական, և գրական-գեղարվեստական արժանիքները:

Մեր կարծիքով ներկա մատենագիտությունը շատ բանով կշահեր, եթե ընդգրկեր հատկապես նախահեղափոխական լրագրերի բովանդակությունը, որպիսին դեռևս չի ամփոփված ոչ մի տեղ:

Հայ հասարակական մտքի զարգացման պատմության ուսումնասիրության համար հատկապես անհրաժեշտ էր տալ «Մշակ», «Նոր դար», «Բյուզանդիոն» և բազմաթիվ այլ լրագրերում հրատարակված կարևոր հոդվածները, որոնք սակայն տուղ չեն գտել Հ. Պետրոսյանի կազմած մատենագիտության մեջ: Ինչ վերաբերում է սովետահայ պարբերականներին, ապա նրանց բովանդակությունը բացահայտվում է Հայաստանի պետական գրապալատի կողմից հրատարակվող «Ժուռնալային» և «լրագրային» հոդվածների տարեգրքերում:

Մատենագիտության առաջին և երկրորդ հատորների վերջում ղետեղված են հեղինակների, թարգմանիչների, գրախոսողների և հայ պարբերականների անունների օժանդակ ցանկերը, իսկ երրորդ հատորում նաև՝ խմբագիրների: Սովետահայ լրագրերի առթիվ չկա որևէ օժանդակ ցանկ, որպիսի հանգամանքը խիստ զժվարացնում է մատենագիտությունից օգտվելու գործը: Եթե ընթերցողը չի հիշում իրեն հետաքրքրող լրագրի ճիշտ վերնագիրն ու հրատարակության տարեթիվը, ապա նա հարկադրված պետք է նայի լրագրերի բոլոր նկարագրությունները:

Ներկա մատենագիտությունը խիստ պակասավոր է, կան բազմաթիվ անճշտություններ, աղավաղումներ, բացի այդ նա լիակատար չէ, կարելի է նկատել, որ Հովհ. Պետրոսյանի կազմած մատենագիտության մեջ կրկնվել են Գարնգին և ուրիշների մատենագիտությունում տեղ գտած անճշտությունները:

Մատենագիտական յուրաքանչյուր աշխատություն գնահատվում է նրանում զետեղված փաստական նյութերի ճշգրտությամբ, նրանց դասավորման ու մատուցման գիտականությամբ: Մատենագիտական աշխատանքի տեխնիկան ու գիտական մասերն այնքան սերտ ձուլված են միմյանց հետ, որ հաճախ մի թվանշանի, համարի, էջի աղավաղումը կարող է թյուրիմացությունների տեղիք տալ և խիստ դժվարացնել նյութերի պրպտումները:

Հայոց պարբերական մամուլի հմուտ գիտակ ն. Գասապյանը գրախոսելով Հովհ. Պետրոսյանի կազմած մատենագիտական աշխատությունը, կատարել է բազմաթիվ ճշտումներ, ուղղումներ, լրացումներ և տվել այն պարբերականների ցանկը, որոնք դուրս են մնացել վերոհիշյալ մատենագիտությունից:

Ընդհանրապես պետք է ասել, որ ի լրացումն Գ. Լևոնյանի և Հովհ. Պետրոսյանի, ն. Գասապյանի ցանկը առանձին վերցրած արժեքավոր մատենագիտական գործ է:

Հիշատակության է արժանի բանասեր Գ. Շահլամյանի «Նյութեր հայ պարբերական մամուլի պատմության համար» ուսումնասիրությունը (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964. № 3, էջ 157—163), ուր ճշտումներ ու լրացումներ են կատարված Հովհ. Պետրոսյանի «Հայ պարբերական մամուլի բիրլիոգրաֆիա» ցանկից դուրս մնացած պարբերականների մասին:

Ներկա մատենագիտությունը կազմելիս մեր ձեռքի տակ է եղել 1967 թվականին լոնդոնում լույս տեսած «Հայկական մամուլի ցուցակ»-ը. Սդրարդ Գյուլբեկյանի խմբագրությամբ, ուր պարբերականների անունները նշված են անգլերեն և հայերեն:

Հայ բուլշևիկյան մամուլի ուսումնասիրման համար մատենագիտական հուսալի աղբյուր է դոկտոր-պրոֆեսոր և Քարսեղյանի «Սովետիկյան հայ պարբերական մամուլի բիրլիոգրաֆիա. (1900—1920)» (Եր., 1959) աշխատությունը: Գիտական ուսումնասիրությունների և մատենագիտական մանրակրկիտ պրպտումների շնորհիվ հեղինակին հաջողվել է իմի հավաքել Անդրկովկասի և Ռուսաստանի տարբեր վայրերում լույս տեսած բուլշևիկյան հայերեն պարբերականները և կազմել դրանց մատենագիտական ցանկը:

Յուրաքանչյուր պարբերականի նկարագրության մեջ հիմնական տվյալների հետ միասին նշվում է նրա հրատարակության տևողությունը, լույս ընծայված համարների քանակը, վերանվանումները, կուսակցության ականավոր գործիչների մասնակցությունը նրանում և այլն:

Առանձնապես գնահատելի է, որ կազմողը նշում է, թե տվյալ լրագրի կամ ամսագրի հավաքածուները կամ առանձին համարները Սովետական Միության որ արխիվում կամ գրադարանում են պահպանվում: Որպես համահավաք ուղեցույցի առաջին փորձ, սա նշանակալի երևույթ է հայկական մատենագիտության մեջ:

Տեղեկատու մեծ նշանակություն ունի նաև բուլշևիկյան հայ պարբերական մամուլում հանդես եկած հեղինակների ծածկանունների վերծանումների օժանդակ ցանկը, որը սույն մատենագիտության մեջ տրված է հավելվածի կարգով:

Ներկա մատենագիտական աշխատությունը արժեքավոր տեղեկատու ձեռնարկ է բուլշևիկյան հայ պարբերական մամուլի, ինչպես նաև Անդրկով-

կասի և Հայաստանի կոմունիստական կուսակցությունների պատմության ուսումնասիրության համար:

Սփյուռքահայ բանասեր Արտաշես Տեր-Խաչատրյանը 1963 թվականին կազմել է հայ լրագրության 170-ամյակի առթիվ Բեյրութում կազմակերպված ցուցահանգեսում ներկայացված հայ պարբերականների ցուցակը: Սակայն ներկա ցուցակը չի կարելի դիտել, որպես լիարժեք մատենագիտական գործ, քանի որ չկան պարբերականները բնութագրող էական տեղեկություններ, նշված է միայն պարբերականի անունը և հրատարակության վայրը: Ցուցակի առանձին բաժնում տրված է Սփյուռքի ներկա հայ մամուլը թվով 134 անուն:

Այնուհանդերձ, Ա. Տեր-Խաչատրյանի կազմած հայ պարբերականների ներկա ցուցակը որպես հավաստի աղբյուր մենք օգտագործել ենք մեր մատենագիտությունը կազմելիս:

Բացի վերոհիշյալ մատենագիտական աշխատություններից, հայ մամուլի պատմության մասին կան մի շարք ուսումնասիրություններ, ակնարկներ, որոնք պարունակում են արժեքավոր մատենագիտական տեղեկություններ պարբերականների մասին:

Հայ պարբերական մամուլի պատմության մարքսիստական լուսարանման բնագավառում ակնառու գործ է ակադեմիկոս Արտաշես Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի սլատմությամբ» և «Հատոր աշխատություններ» (առաջիկա լույս է տեսել Ա և Բ հատորները):

Առաջին հատորը հիմնականում Հնդկահայ պարբերական մամուլի պատմական տեսության առաջին փորձերից մեկն է: Այստեղ տրված են գաղութահայ հինորյա ոչախների և Հնդկահայ պարբերական մամուլի նկարագրական-բնութագրական ուրվագծերը: Աշխատության երկրորդ հատորում բնութագրվում են Վենետիկում, Վիեննայում, Փարիզում և Մանչեստրում 19-րդ դարի սկզբից մինչև 70-ական թվականները լույս տեսած հայ պարբերականները:

Հեղինակը հանգամանորեն վերլուծում է հայ պարբերականների առանձնահատկությունները, նրանց բովանդակությունն ու ուղղությունը:

Այս աշխատությունն առաջին լուրջ փորձն է հայ պարբերական մամուլի պատմության գիտական ուսումնասիրության ճանապարհին:

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ ուրույն տեղ է գրավում հայ բոլշևիկյան մամուլը, որը բացառիկ դեր է խաղացել մասսաներին կազմակերպելու, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և Հայաստանում Սովետական կարգեր հաստատելու գործում: Հայ բոլշևիկյան մամուլում իր արտացոլումն է գտել Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների քաղաքական ու գաղափարական պայքարի հրատապ հարցերը:

Մեզանում հայ բոլշևիկյան մամուլի պատմության գիտական ուսումնասիրությամբ երկար տարիներ զբաղվել է Խ. Բարսեղյանը: 1956 թվականին հրատարակվեց նրա «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն 1900—1920 թթ.» ուսումնասիրությունը, որտեղ կան արժեքավոր մատենագիտական նյութեր:

Խրախուսելի է հեղինակի ջանքերը բոլշևիկյան հայ պարբերականներում տպագրված հոդվածների հեղինակների շուրջ 1500 ծածկանունների վերծանման գործում:

1963 թվականին Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից հրատարակվեց «Հայ սյուրրեալական մամուլի պատմությունից» (Եր., 1963) խորագրով ժողովածուն՝ Արտաշես Կարինյանի խմբագրությամբ: Ժողովածուն բովանդակում է մի շարք հոդվածներ հայ պարբերական մամուլի պատմության առանձին դրվագների մասին: Դրանց զգալի մասը լուսարանում է 20-ական թվականների սովետահայ մամուլի պատմության առանձին հարցերը: Որոշ հոդվածներ նվիրված են սփյուռքահայ կոմունիստական և պրոգրեսիվ մամուլին:

Հրապարակի վրա են մի շարք ուսումնասիրություններ, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ արտասահմանյան դեմոկրատական և կոմունիստական պարբերական մամուլի մասին: Այսպես օրինակ, Ռ. Խաչատրյանի «Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից» (Եր., 1960) աշխատությունը հիմնականում նվիրված է բուլղարահայ կոմունիստական մամուլին, նրա ձևավորման գաղափարական և կազմակերպական նախադրյալներին: Մասնավորապես վեր է հանված արտասահմանյան հայ կոմունիստական անդրանիկ «Կարմիր լուրեր» ամսաթերթի դերն ու նշանակությունը:

Ս. Իշխանյանի «Հայ դեմոկրատական մամուլի պատմությունից» (Եր., 1962) աշխատության մեջ վերլուծվում և գնահատվում է ռուսական առաջին հեղափոխության տարիներին հրատարակված գյուղացիական դեմոկրատական «աշխատանք», ինչպես նաև նրա շարունակությունը կազմող «նոր աշխատանք» հանդեսները:

Սփյուռքահայ դեմոկրատական մամուլի պատմության ուսումնասիրության մասին արժեքավոր նյութեր կարելի է գտնել Կ. Դալլաբյանի «Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից» (Եր., 1964) աշխատության մեջ: Այստեղ քննարկվում են Լիբանանի հայ դեմոկրատական մամուլի ստեղծման և զարգացման հարցերը, սկսած 1920-ական թվականներից: Հատուկ քննարկման նյութ է ծառայել այդ ժամանակաշրջանի երկու օրգանների՝ «Ժողովուրդի Չայն» և «Մեր նշանարանն է յառաջ» թերթերի գործունեությունը:

Հիշատակության արժանի է Ս. Սարգսյանի «Սովետական Ռուսաստանի հայ մամուլը 1918—1921 թթ.» աշխատությունը, որը հրատարակվեց 1968 թ.:

Պատմա-քանասիրական այս ուսումնասիրության մեջ հեղինակը հավաքել է մեր երկրի տարբեր քաղաքներում պահպանվող և արխիվային նյութերի հիման վրա շարադրել Սովետական Ռուսաստանի հայ մամուլի ստեղծման հարուստ ու հետաքրքիր պատմությունը:

Սփյուռքահայ մշակութային կյանքի, այդ թվում հայ պարբերականների մասին հետաքրքիր և արժեքավոր նյութեր կան Ս. Գասպարյանի «Սփյուռքահայ գաղթախններն այսօր» (Եր., 1962) աշխատության մեջ:

Վ. Ամիրբեկյանի «Սովետահայ տեղական մամուլը» գրքում (Եր., 1964) տրված է ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի (1921—1925 թթ.) մեր հանրապետության գավառային թերթերի բնութագիրը. նրանց դերը տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառում: Վերջում տրված է թերթերի այրբենական ցանկը, նրանց հրատարակության վայրը և լույս ընծայման ժամանակը, ինչպես նաև գավառային թերթերի լուսակարները:

Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզում լույս տեսնող մամուլի մասին

է խոսվում Ս. Ավագյանի «Սովետական Ղարաբաղի մամուլը» գրքում: (Քաթու 1963): Այստեղ տրված է Հեռնային Ղարաբաղի հայ մամուլի հակիրճ շարադրանքը:

Մենք համառոտակի բնութագրեցինք հայ պարբերական մամուլի պատմության և մատենագիտության անցյալն ու ներկա վիճակը: Չնայած այդ ուղղությամբ կատարված աշխատանքին, այնուամենայնիվ հայոց լրագրության լիակատար մատենագիտության հարցը մեզանում դեռ չի լուծված: Այն պահանջում է հիմնովին վերամշակել, ճշտել և լրացնել հրապարակի վրա եղած մատենագիտական աշխատությունները և գիտության ժամանակակից պահանջներին համապատասխան կազմել լիարժեք ու լիակատար մատենագիտություն:

Պարբերական մամուլի մատենագիտություն կազմելը առավել դժվար է քան գրքերինը: Լրագիրը, հանդեսը շարունակվող հրատարակություն են, նրանք լույս են տեսնում տարիների ընթացքում, հաճախ փոխվում են նրանց անունները, հրատարակության վայրերը, պարբերականությունը, զաղափարական ուղղությունը:

Մատենագիտության մեջ անխտիր պետք է արտահայտվեն նման և այլ բնույթի փոփոխությունները, նա պետք է արտացոլի պարբերականի անցած պատմական ուղին:

Պարբերականների մատենագրումը խիստ աշխատատար գործ է. այն պահանջում է համրերատար աշխատանք, մատենագիտական մանրակրկիտ պրպտումներ, որի համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տվյալ պարբերականի բոլոր համարները: Մինչդեռ հայ պարբերականների լրիվ հավաքածուները չի կարելի գտնել ոչ մեր երկրի խոշորագույն գրադարաններում, ոչ էլ Սփյուռքի որևէ մատենադարանում:

Այս պայմաններում առանձնահատուկ կարևորություն ուներ ի մի հավաքել և կազմել համահավաք մատենագիտական մի ուղեցույց, որն արտացոլեր աշխարհով մեկ ցիր ու ցան եղած հայ պարբերականների հավաքածուները:

Այս շնորհակալ գործին ձեռնամուխ եղավ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանը՝ հայ տպագիր գրքերի և պարբերականների աշխարհում ամենահարուստ շտեմարանը:

Նախապես մենք ծրագրել էինք կազմել միայն հանրային գրադարանում եղած հայ պարբերականների ցանկը. հետագայում մեր ծրագիրն ընդարձակվեց, հարկ եղավ մատենագիտության մեջ ընդգրկել ինչպես մեր երկրի, այնպես էլ Սփյուռքի խոշոր գրադարաններում պահպանվող հայ պարբերականների հավաքածուները:

Հենց սկզբից նշենք, թե ինչ ենք ընդգրկել ներկա մատենագիտական ուղեցույցի մեջ, և ինչ ելակետ ենք ունեցել պարբերական բնույթի հրատարակություններ ընտրելիս:

Այս գործում մենք հենվել ենք ինչպես հրապարակի վրա եղած նախորդ մատենագիտությունների, այնպես էլ խոշոր գրադարաններում ու մատենադարաններում որպես պարբերականներ առանձնացված հավաքածուների և նրանց գրացուցակների վրա:

Այսպիսով, մատենագիտության մեջ մենք ընդգրկել ենք հետևյալ տեսակի հայ պարբերականները՝

- ա. լրագրեր,
- բ. հանդեսներ,
- գ. տարեգրքեր, տարեցույցներ,
- դ. գրական-գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող օրացույցներ,

ե. Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտա-հետազոտական ինստիտուտների, փորձակայանների, լաբորատորիաների, գիտական մյուս կազմակերպությունների, ընկերությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից շարունակաբար լույս տեսնող գիտական աշխատությունները, տեղեկագրերը, զեկույցները, ժողովածուները և այլ պարբերական հրատարակություններ, որոնք լույս են տեսել տպագիր, վիճատիպ, խմորատիպ և ձեռագիր:

Ներկա համահավաք մատենագիտության մեջ արտացոլված են ոչ միայն Հայաստանի, այլև Սովետական Միության խոշորագույն գրապահոցներում, մասամբ էլ Սփյուռքի մի շարք մատենադարաններում եղած հայերեն պարբերականները, որոնք լույս են տեսել 1794 թվականից մինչև 1967 թվականը ներառյալ:

Սակայն մատենագիտության հիմքը հիմնականում կազմել են Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի հայերեն պարբերականների հավաքածուները:

Նախապես կազմվել է այդ պարբերականների ցուցակը որը հետագայում համեմատվել է՝ Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարանի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Երևանի պետական համալսարանի գրադարանի, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի, Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Հայաստանի պետական պատմական թանգարանի, էջմիածնի ճեմարանի գրադարանների և Հայաստանի պետական գրապալատի հայերեն պարբերականների ֆոնդերի հետ:

Նման աշխատանք է տարվել նաև Միության հետևյալ խոշոր գրապահոցներում՝

- ՍՍՀՄ Վ. Ի. Լենինի անվան Պետական գրադարան.
- Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարան.
- ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի գրադարան.
- ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելյան ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի րաժանմունքի գրադարան.
- Վրաստանի Կ. Մարքսի անվան հանրապետական գրադարան.
- ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական մասնաճյուղ.
- Թբիլիսիի պետական համալսարանի գրադարան.
- Վրաստանի պետական պատմական թանգարանի գրադարան.
- Թբիլիսիի Ստ. Շահումյանի անվան քաղաքային մասսայական գրադարան.
- Ադրբեջանի Մ. Ֆ. Ախունդովի անվան հանրապետական գրադարան.

- ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Լեզր-րեջանական մասնաճյուղի գրադարան.
- Բաբվի Վ. Ի. Լենինի անվան քաղաքային մասսայական դրադարան:

Մենք ձգտել ենք հնարավորին շափ սույն ուղեցույցում ընդգրկել նաև սփյուռքի խոշոր մշակութային կենտրոններում պահպանվող հայերեն պարբերականները: Սակայն մեզ հաջողվել է հավաստի տեղեկություններ ստանալ Փարիզի նուրարյան, Անթիլիասի, Երուսաղեմի և Վիեննայի մատենադարաններից: Օգտվելով առիթից մենք մեր խորհին երախտագիտությունն ենք հայտնում այդ մատենադարանների տնօրեններին այս հայրենանվեր գործում մեզ այդքան սիրով աջակցելու համար: Ինչքան ցանկալի և շահեկան կլինեք այս աշխատության մեջ տեսնել նաև հայ տպագրության կարևորագույն օջախի՝ Վենետիկի մատենադարանում պահպանվող հայերեն պարբերականների հարուստ հավաքածուները: Չնայած մեր գործադրած բոլոր ջանքերին մեզ չհաջողվեց այնտեղից ստանալ անհրաժեշտ տվյալներ, ինչպիսի հանգամանքը անկասկած պետք է համարել մեր ներկա ցանկի լուրջ բացերից մեկը:

Ուղեցույցում նկարագրված են նաև հայերեն այն պարբերականները, որոնք շենք հայտնաբերել գրադարաններում, սակայն նրանց մասին տեղեկությունները՝ քաղել ենք մատենագիտական և գրական զանազան աղբյուրներից: Դրանցից կարելի է հիշատակել՝ Գ. Լեոնյանի, Հ. Պետրոսյանի, Գ. Զարպհանալյանի, Ա. Ղազիկյանի, Գ. Գալեմքյարյանի, Մ. Պոտուրյանի, Ն. Հարոյի, Ն. Կասապյանի, Ա. Տեր-Խաչատրյանի, Դ. Շահլամյանի և այլոց մատենագիտական գործերը և ուսումնասիրությունները:

Մի քանի խոսք հայերեն պարբերականների մասին:

Անշուշտ մեզ բոլորիս կհետաքրքրի, թե հայ լրագրության սկզբից մինչև այժմ աշխարհում հայերեն քանի պարբերականներ են լույս տեսել: Եթե մինչև այժմ մեզ չի հաջողվել մոտավոր ճշտությամբ սահմանել հայ տպագիր գրքի քանակը, առավել դժվար է պատասխանել այն հարցին, թե առ այսօր ինչքան է կազմում հայոց պարբերականների քանակը: Այս առթիվ կան տարակարծիքներ: Այսպես օրինակ՝ Մկրտիչ Պոտուրյանը իր «Հայ հանրագիտակ»-ի առաջաբանում ակնարկում է 2600, Ա. Տեր-Խաչատրյանը «Հայ մամուլի ցուցահանդես» գրքի առաջաբանում նշում է, որ հայ մամուլի քանակը պետք է որ կազմի 2500—2600 անուն, իսկ ակադեմիկոս Արտաշես Կարինյանը «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» աշխատության առաջին հատորի առաջաբանում կարծիք է հայտնում, որ հայ պարբերական մամուլի քանակը հասնում է շուրջ 4000-ի: Ինչ վերաբերում է Գ. Լեոնյանի և Հովհ. Պետրոսյանի կազմած մատենագիտություններում նկարագրված հայ պարբերականների քանակին, ապա առաջինի մոտ այն կազմում է 1586 և 21 հայատառ թուրքերեն, իսկ երկրորդի մոտ՝ 1836:

Այս մատենագիտությունը կազմելիս մենք ձգտել ենք ոչ միայն լրացնել այն վերջին տասնամյակում լույս տեսած հայերեն նոր պարբերականներով, այլև հնարավորին շափ համալրել, ճշտել նախկինում հրատարակվածների մասին եղած առավել էական տվյալները:

Իրկար տարիների ուսումնասիրությունների և մատենագիտական մանրակրկիտ պրպտումների շնորհիվ ներկա ուղեցույցում ներկայացված է աշխարհում լույս տեսած 3260 հայ պարբերականներ: Արժանի է հիշատակել,

որ հանրային գրադարանում այսօրվա դրությամբ պահպանվում է 1970 անուն հայերեն պարբերականներ:

Հայերեն պարբերականների քանակի մասին մեր բերած այս տվյալները իհարկե վերջնական համարել չենք կարող, քանի որ այս ուղղությամբ տարվող առաջիկա ուսումնասիրությունները, մայր հայրենիքի և Սփյուռքի համատեղ ջանքերը կարող են նոր լույս սփռել և սահմանել հայ մամուլի ճշգրիտ քանակը:

Մատենագիտությունը լիարժեք է այն դեպքում, երբ նրանում ընդգրկված նյութերի նկարագրությունները կատարված են սկզբնաղբյուրների հիման վրա:

Արժե նշել, որ այս ուղեցույցում ընդգրկված հայ պարբերականներից 2750 անուն նկարագրված են «Դեվիդու», իսկ 510 անուն պարբերականների մասին տվյալները քաղված են մատենագիտական աղբյուրներից, որոնք նշված են աստղանիշով:

Այժմ բուն մատենագիտության մասին:

Ի տարբերություն նախնիներում հրատարակված բոլոր մատենագիտական աշխատությունների, ներկա համահավաք ցանկում պարբերականների նկարագրությունները տրված է անունների այբբենական կարգով:

Նյութերի այբբենական դասավորման նման կարգը ընդունելիս մենք դեկավարվել ենք հետևյալ նկատառումներով:

1. Մատենագիտության համահավաք բնույթը, այսինքն որ նրա մեջ արտացոլված են մի քանի խոշոր գրադարաններում պահպանված հայ մամուլի հավաքածուները, յուրաքանչյուր պարբերականի գտնվելու վայրի նշումով:

2. Այսպիսի դասավորությունը համընկնում է մեր երկրի խոշոր գրադարանների պարբերական հավաքածուների այբբենական գրացուցակներին: Այս տեսակետից ներկա ուղեցույցը գործնական մեծ կիրառում կունենա պարբերականների քաղմահարուստ հավաքածուներում արագ կողմնորոշվելու գործում:

Աշխատանքի ընթացքում մեր առջև հարց ծառայավ, արդյոք նպատակահարմար չէ գործնական նկատառումներով թեկուզ և պայմանականորեն հայ պարբերականները բաժանել երկու մասի՝ լրագրերի և հանդեսների, ելնելով նրանց բովանդակությունից, արտաքին տեսքից, պարբերականությունից, էջերի քանակից և ծավալից:

Մասնավորապես նախահեղափոխական մի շարք պարբերականների բնորոշման գործում կան շփոթություններ. նրանցից շատերի վրա տպագրված է «Օրագիր», «Լրագիր», սակայն նրանք իրենց արտաքին տեսքով ու բովանդակությամբ հանդեսներ են: Այսպես օրինակ, «Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա), վրան գրված է «Օրագիր», իսկ իրականում լույս է տեսել իբրև կիսամսյա, կամ «Հայրենասեր» (Զմյուռնիա) գրված է օրագիր, սակայն լույս է տեսել կիսամսյա և այլն:

Այնուհանդերձ մենք ներկա աշխատության մեջ փորձեցինք առանձնացնել լրագրերը հանդեսներից և պարբերաբար լույս տեսնող մյուս հրատարակություններից:

Ինչ խոսք, որ այստեղ չեն բացառված որոշ անճշտություններ և շփոթություններ, որի համար ընթերցողները թող ներողամիտ լինեն:

Հետաքրքիր է իմանալ, որ այս պայմանական բաժանմամբ հայ լրագրերի քանակը կազմում է 1158 անուն, իսկ հանդեսներինը՝ 2102 անուն:

Նյութերը նկարագրելիս առաջնորդվել ենք սովետական մատենագիտութ-
թյան ժամանակակից մեթոդներով և տպագիր երկերի նկարագրության միաս-
նական կանոններով: Ինչպես վերը նշեցինք, պարբերականները դասավորել
ենք ըստ նրանց անունների այբուբենի, անկախ հրատարակության ժամանա-
կից ու վայրից:

Ուղեցույցում յուրաքանչյուր անուն պարբերական գրանցվել է առանձին
համարի տակ: Այն դեպքում, երբ տվյալ պարբերականը լույս է տեսել մի
քանի անուններով, նկարագրությունը տրվել է վերջին անվան վրա, իսկ ծա-
նոթագրություններում նշվել է անվան փոփոխությունները, որոնցից յուրա-
քանչյուրը դիտվել է որպես ինքնուրույն միավոր և նկարագրվել այդ անվան
տակ, ստանալով առանձին համար:

Այսպես օրինակ՝ «Սովետական Հայաստան», օրգան ՀԿԿ Կենտկոմի Հայ-
կական ՍՍՀ Գերագույն Սովետի և Մինիստրների Սովետի Երևան, 1940—
1967...

Նախկինում լրագիրը հրատարակվել է հետևյալ խորագրերով՝ «Կոմու-
նիստ» (1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. մայիս), «Խորհրդային Հա-
յաստան» (1921—1940 թթ.):

Վերահիշյալ փոփոխված անունները ուղեցույցում նկարագրվել են իրենց
անվան համապատասխան համարի տակ, նշելով նրանց լույս ընծայման տա-
րեթվերը:

«Կոմունիստ»-ի և «Խորհրդային Հայաստան»-ի նկարագրություններից
հետո տրվել են փոխադարձ հղումներ՝

«Կոմունիստ» տես՝ «Խորհրդային Հայաստան».

«Խորհրդային Հայաստան» տես՝ «Կոմունիստ»:

Ներկա մատենագիտական ցանկում յուրաքանչյուր պարբերականի մա-
սին հաղորդվել են հետևյալ տվյալները՝

1. Պարբերականի անունը.
2. Բնույթը (հասարակական-քաղաքական, ազգային, գրական, կրոնական,
երգիծական և այլն).
3. Պարբերականությունը (օրաթերթ, շաբաթաթերթ, ամսաթերթ, տարե-
ցույց).
4. Օրգանը.
5. Հրատարակության վայրը, տպարան, տարեթիվը (սկիզբը և վերջը).
6. էջերի քանակը և չափսը.
7. Խմբագիր, հրատարակիչ, տնօրեն, արտոնատեր, խմբագրական կո-
լեգիա.
8. Ծանոթագրություններ (անվան և տարեթվերի փոփոխություններ, քանի
համար է լույս տեսել և այլն).
9. Նշում խոշոր գրադարաններում պարբերականի գտնվելու մասին (տա-
րեթվեր, ՆՆ-ներ):

Ստորև բերենք պարբերականի նկարագրության մի նմուշ.

ՆՈՒ ԴԱՐ: Քաղաքական և գրական լրագիր: Թիֆլիս, տպարան Ա. Մի-
խելսոնի, Պետրովի, ապա Մելիք-Շահնազարյանի, 1883—1916, 4 էջ,
(49×36) սմ.: Խմբագիր-հրատարակիչ՝ Սպանդար Ասլանդարյան:

(1909—1916 թթ. լույս է տեսել մեկական Ն):

29 1883—1908 (ՆՆ):

- Մ 1883—1916.
- ՄԼԻ (Ը) 1888—1905.
- ՀՊԹ 1894—1903.
- ՄԼԳ 1884—1916.
- ԼԸԿ 1883—1916.
- ՄԼԻ (Վ) 1884—1906.
- ԹՄԿ 1884—1902.

Ինչպես կարելի է նկատել, նկարագրության վերջում կրճատումներով նշվել են այն գրադարանները, որոնցում պահվում է տվյալ պարբերականը, օրինակ, Հայկական ՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան—ՀԻ, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան—Մ, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան—ԻԱԹ, Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարան—ԱԿԳ, Հայաստանի պետական պատմական թանգարան—ՀՊԹ, Երևանի պետական համալսարան—ԵՊՀ, էջմիածնի ճեմարանի գրադարան—էՃԳ, ՍՍՀՄ Վ. Ի. Լենինի անվան պետական գրադարան (Մոսկվա)—ՄԼԳ, Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան Պետական հանրային գրադարան—ԼՀԳ, ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի արևելյան ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի գրադարան—ՍՍՀՄ ԳԱՍ.Ի.Վ.Ի., ՍՄԿԿ կենտրոնին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ—ՄԼԻ, Վրացական ՍՍՀ Կ. Մարքսի անվան հանրապետական գրադարան—ՎՀԳ, Թբիլիսիի Ստ. Շահումյանի անվան քաղաքային մասսայական գրադարան—ԹՄԻ, Աղբյուրյանական ՍՍՀ Մ. Ֆ. Ախունդովի անվան Հանրապետական գրադարան—ԱՀԳ, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան—Վիեն. Մ, Փարիզի Նուբարյան մատենադարան—ՓՆՄ, Երուսաղեմի Մատենադարան—ԵՄ, Անթիլիասի Մատենադարան—ԱՄ:

Հայկական ՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում գտնվող պարբերականների մասին տրվում է սպառիչ տեղեկություններ:

Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի, բարձրագույն ուսումնական հաստատությունների, գիտա-հետազոտական ինստիտուտների տեղեկագրերը, գիտական աշխատությունները, բյուլետենները, զեկուլյցները ի մի հավաքելու նպատակով, այդպիսիք նկարագրվել են տվյալ կազմակերպության անվան տակ ըստ մատենաշարերի:


Պարբերականների հրատարակության, տպագրության վայրի, տպարանի, ժամանակագրության, հրատարակիչների և խմբագիրների մասին տեղեկություններ կարելի է ստանալ օժանդակ ցանկերից:

Օժանդակ ցանկերը բխում են մատենագիտության էությունից, լրացնում են նրան՝ պարբերական հրատարակությունների մասին ամբողջական պատկերացում կազմելու համար: Այս հանգամանքը մեզ դրոշմ ներկա ուղեցույցին կից ներկայացնել հետևյալ օժանդակ ցանկերը, որոնցից յուրաքանչյուրի մասին խոսենք ավելի մանրամասն:

ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ

Ինչպես կարելի էր նկատել, նախկինում լույս տեսած մատենագիտական բոլոր ցանկերում հայերեն պարբերականները նկարագրվել է նրանց հրատա-

3762



րակութիւնն ժամանակագրական կարգով: Այդ սկզբունքը պատճառարանված է, թե մատենագիտութիւնն մեթոդիկայի և թե պարբերականների զարգացման պատմութիւնն ուսումնասիրելու տեսակետից:

Հաշվի առնելով ներկա մատենագիտութիւնն գործնական նշանակութիւնը պարբերականների ամենօրյա սպասարկման և պրպտումների գործում, մենք նախընտրեցինք մայր ցուցակը տալ այսպէս կարգով: Այդ պատճառով էլ անհրաժեշտ գտանք օժանդակ գիտական ապարատում հենց սկզբից տալ հայ պարբերական մամուլը ըստ ժամանակագրութիւնն, որի միջոցով կարելի է հետևել, թե զարգացման ինչպիսի պատմական ուղի է անցել այն:

Այս ցանկում ժամանակագրական կարգով նշված են տարեթիւերը սկսած 1794—1967 թվականը: Յուրաքանչյուր տարեթիւի տակ տրված է տվյալ տարվա ընթացքում լույս տեսած պարբերականների անունները և նրանց հրատարակութիւնն վայրը: Սրա միջոցով հեշտութիւնը կարելի է սահմանել, թե որ թվականին և որտեղ, հայերեն ինչպիսի պարբերականներ են լույս տեսել:

ՀԱՅՈՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԸՍՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԻ

Այս օժանդակ ցանկում հայերեն պարբերականները դասավորված են ըստ հրատարակութիւնն վայրերի՝ Երկրների և առանձին քաղաքների, պահպանելով ժամանակագրական կարգը: Յուրաքանչյուր պարբերականի դիմաց նշվում է նրա տպագրութիւնն առաջին տարին:

Քանի որ լրագրութիւնն պատմութիւնը սկսվում է Հնդկաստանից, ցանկում առաջինը նշված է այդ երկիրը: Այնուհետև տրվում են Մադրաս, Բոմբեյ, Կալկաթա, Սինգափուր քաղաքներում լույս տեսած պարբերականները ըստ ժամանակագրութիւնն:

Օրինակ՝ Հ Ե Ղ Կ Ա Ս Տ Ա Ն
Մադրաս
Ազդարար 1794
Բանասեր 1848

Այսպիսով, այս ցանկից ակնառու է դառնում, թե աշխարհի ո՞ր երկրի և ո՞ր քաղաքում քանի և ի՞նչ պարբերականներ են լույս տեսել:

ՍՍՀՄ-ում լույս տեսած հայերեն պարբերականները նշված են ըստ միութենական հանրապետութիւննների:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Հայ լրագրութիւնն պատմութիւնն ուսումնասիրողներին օգնելու նպատակով, մատենագիտութիւնն վերջում զետեղել ենք պարբերականների հրատարակութիւնն հետ առընչվող անձանց անվանացանկը (խմբագիրներ, հրատարակիչներ, տպարանատերեր):

Չնայած ներկա ուղեցույցում անձնանունների նկարագրութիւնները տրված են ինչպես հին, այնպես էլ նոր ուղղագրութիւնը, իսկ ժամանակակից

ընթերցողը իր ցանկացած ազգանունը կ'փնտրի նոր ձևով, ուստի մենք նպատակահարմար գտանք սույն ցանկը կազմել նոր ուղագրությամբ:

Յուրաքանչյուր անունից հետո դրվել են նկարագրության այն հերթական համարները, որոնցում հիշատակված են խմբագիրները, տպարանատիրերը և հրատարակիչները:

Անձնանունների ցանկում շին մտցված առաջարանում հիշատակված հեղինակների անունները:

Սույն ցանկի օգնությամբ կարելի է պարզել, թե այս կամ այն անձնավորությունը ինչ պարբերականներ է խմբագրել կամ հրատարակել:

ՏՊԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Տպարանները նշված է ըստ քաղաքների այրբենական կարգով, ընդ որում քաղաքների հերթականությունը պայմանավորված է նրանցում եղած տպարանների քանակով:

Քացի այս օժանդակ ցանկերից, վերջում հավելվածի կարգով տրված է «Հրատարակության վայրը և թվականը չպարզված պարբերականների այրբենական ցուցակ»-ը, նրանց գրանցման հերթական համարների նշումով:

Ներկա ձևով ներկայացված ուսումնասիրողների համար հուսալի ուղեցույց է հայ պարբերականների հավաքածուներում արագ կողմնորոշվելու և ցանկացած հանդեսը, լրագիրը այս կամ այն գրադարանում գտնելու դժվարին գործում: Նա միաժամանակ գործնական մեծ նշանակություն կունենա բացահայտելու խոշոր գրապահոցներում պահպանվող հայերեն պարբերական ֆոնդերի պակասը. կօգնի համալրելու այդպիսիք, ինչպես նաև կազմակերպելու կրկնօրինակների փոխանակումը:

Այնուհանդերձ, սույն մատենագիտական ցանկը չի կարող դիտվել որպես հայոց պարբերականների լիակատար մատենագիտություն: Ինչպես կարելի է նկատել, մենք մեր առջև շատ համեստ խնդիր ենք դրել՝ լրացնել նախկինում հրատարակված մատենագիտությունները, կատարել նրանցում որոշ ճշտումներ, ցույց տալ հայերեն պարբերականների գտնվելու վայրը և դրանով իսկ օգնել ընթերցողներին ու գրադարանավարներին պարբերականների հետ տարվող աշխատանքում:

Ներկա մատենագիտության համար մենք հավուր պատշաճն ենք մատուցում Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի կոմպլեկտավորման բաժնի վարիչ ընկ. Եղիազար Մարգարյանին, որպես այս գործի անմիջական նախաձեռնողի, և գլխավոր գրադարանավար ընկ. Ամալյա Կիրակոսյանին, նրա երկարամյա քրտնաջան ու բարեխիղճ աշխատանքի համար:

Այս գործում իր արժանի ներդրումն ունի նաև կոմպլեկտավորման բաժնի գլխավոր մատենագետ Կարո Քացախյանը, որը կազմել է սույն մատենագիտության օժանդակ ցանկերը:

Իհարկե նման աշխատությունը զերծ չի լինի պակասներից, անճշտություններից: Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի ղեկավարությունը անշուտի երախտապարտ կլինի այն անձանց, որոք իրենց դիտողություններն ու լրացումները կստեն սույն ուղեցույցի վերաբերյալ:

Ս ենք համոզված ենք, որ Հայաստանի, ողջ Սովետական Միության, ինչպես և արտասահմանի գործիչները չեն զլանա իրենց օգնությունը ցույց տալու մեզ այս հայրենանվեր գործում:

Շնորհակալական մեր խոսքն ենք ուզում ուղղել բոլոր այն գրադարանների աշխատողներին, որոնք սիրով աջակցել են ուղեցույցի կազմմանը, մեր տրամադրության տակ ղեկավարել իրենց մոտ եղած պարբերականների հավաքածուները:

Հայ լրագրության պատմության ուսումնասիրության և հայագիտության հետագա զարգացման խնդիրները հրամայական պահանջ են դնում՝ մոտակա տարիներին կազմել ոչ միայն հայոց պարբերականների լիակատար մատենագիտություն, այլև բացահայտել նրանց բազմահարուստ բովանդակությունը:

Այս գործում պետք է համատեղ ջանքեր գործադրեն հանրային գրադարանը, մեր հանրապետության խոշոր գրադարանները, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հայ պարբերական մամուլի պատմության ենթաբաժինը:

Մեզ համար խիստ կարևոր է Սփյուռքում գտնվող հայ բանասերների, պատմաբանների, գրողների, տպարանատերերի, խմբագիր-հրատարակիչների, մատենադարանների տնօրենների, բոլոր գրասերների օգնությունը այս գործում, քանի որ արտասահմանի գրատներն ու անհատական հավաքածուներն են, որ դուրս են մնացել մեր տեսագաշտից:

Ցանկալի է ուղարկել այն պարբերականների նկարագրությունները, որոնք չկան մեր ցուցակում: Շատ կարևոր է, եթե մեզ փոխանակման կարգով ուղարկվի սույն ցանկում աստղանիշով տրված և չեղած հայերեն պարբերականների օրինակները կամ ֆոտոպատճենները: Այս բոլորը հնարավորություններ կընձեռնի ձեռնարկելու հայերեն պարբերականների լիակատար մատենագիտության կազմման համազգային գործում:

Մատենագիտական այս ուղեցույցի վերաբերյալ բոլոր դիտողություններն ու լրացումները խնդրվում է ուղարկել հետևյալ հասցեով.

Հայկական ՍՍՀ, Երևան—9, Տերյան փող. № 72.

Ալ. Մյասնիկյանի անվան Հանրապետական գրադարան,

Կոմպլեկտավորման բաժին:

Հ. ԿՈՍՏԻԿՅԱՆ

Հ. ՍԻՎԱՆՅԱՆ

В В Е Д Е Н И Е

В истории общественно-политической и культурной жизни армянского народа большую роль сыграло книгопечатание.

Культурная жизнь армян до установления Советской власти, в основном протекала за пределами Армении. Армянский народ веками находился под гнетом иноземных поработителей—арабов, монголов, турков, персов. Вследствие тяжелых политических условий, армяне большими массами оставляли родную землю и рассеивались по всему миру. Лучшие представители армянского народа на чужбине создавали типографии и другие очаги культуры.

В 1512 году в одной из венецианских типографий армянским первопечатником Акопом Мегарттом была издана первая армянская печатная книга «Парзатумар» (Календарь).

В следующем 1513 году в той же типографии вышли еще четыре армянские книги.

Факт издания армянских книг в столь раннюю эпоху—знаменательное явление в истории армянской культуры.

В дальнейшем армянские книги печатались и в других городах мира; в Константинополе, Риме, Львове, Милане, Париже, Н. Джуга (Иран), Ливорно, Амстердаме, Марселе, Вене, Калькуте, Мадрасе, Петербурге, Москве, Астрахане, Н. Нахичеване и во многих городах мира.

Наряду с книгами на армянском языке печатаются также газеты и журналы.

Родоначальником армянской периодической печати был священник Арутюн Шмавонян, который в Мадрасе основал типографию и в 1794 году издавал первый армянский журнал «Аздарар» («Глашатай»).

После этого во многих странах мира: в Италии, Австрии, Турции.

Индии, России, Америке, Франции, Болгарии, Сирии, Греции, Румынии, Египте, Персии, Англии, начали издаваться армянские газеты и журналы, которые наряду с книгой играли весьма важную роль в развитии общественной мысли, и культурной жизни армянского народа.

Армянская периодическая печать особенно большого развития достигла за советские годы, когда она стала подлинно народной, являясь могучим оружием коммунистического воспитания масс в борьбе за коммунизм.

История армянской периодической печати стала предметом изучения многих армянских ученых как в прошлом так и в настоящем.

В прошлом издавались ряд исследований по истории армянской периодической печати в коих содержатся много ценных библиографических материалов. Среди них следует особо отметить следующие труды: Г. Зарпаналян «Армянская библиография» (Венеция, 1883), А. Газикян «Армянская новая библиография и энциклопедия армянской жизни» (Венеция 1909—1913), Г. Галемкерян «История армянской печати сначала до нашего времени» (Вена, 1893), Г. Левонян «Армянская периодическая печать. Исторический обзор сначала до наших дней 1794—1894» (Александрополь, 1895); Н. Аро «Армянская печать в России и на Кавказе» (Тифлис, 1878), М. Потурян «Армянская печать за 15 лет. 1894—1909» (Венеция, 1909).

Много ценных исследований вышли за последние годы. Среди них особенно следует отметить трехтомный монументальный труд академика А. Кариняна «Очерки истории армянской журналистики» (вышло два тома. Ереван, 1956—1960).

Данное исследование является первой попыткой научного изучения и марксистского освещения истории армянской периодической печати.

В истории армянской периодической печати особое место занимает большевистская печать, которая сыграла исключительную роль в деле победы социалистической революции и установлении Советской власти в Армении.

На страницах армянской большевистской печати нашли свое отражение политическая и идеологическая борьба закавказских большевистских организаций и насущные вопросы политической и экономической борьбы пролетариата.

Этому вопросу посвящено исследование доктора исторических наук, профессора Х. А. Барсегяна «История армянской большевистской печати» (Ереван, 1956).

Вопросами изучения истории армянской печати долгие годы занимается сектор истории армянской периодической печати института истории Академии наук Арм. ССР.

В 1963 году сектор издал сборник под заглавием «Из истории армянской периодической печати», где помещены ряд статей и очерков освещающие отдельные вопросы Советско-армянской печати, а также коммунистической и прогрессивной армянской печати за рубежом. Из-

даны ряд книг посвященных истории армянской периодики отдельных зарубежных стран.

Наличие большого количества армянской периодической печати несомненно вызвало необходимость создать библиографии этих изданий.

Однако, составление библиографии армянской периодической печати представляет большую трудность из-за разбросанности типографских очагов по всему миру. В силу этого, в настоящее время ни в Советской Армении, ни зарубежом невозможно найти все названия периодических изданий их более или менее полные комплекты.

В прошлом были попытки составлении библиографии армянской печати, но они имели частичный охват.

В 1924 году в Вене, мхитарист Р. Каралетян составил и издал «Полный список армянской печати находящихся в Венском Матенадаре мхитаристов 1794—1921». В ней зарегистрировано 892 названий армянских газет и журналов хранившихся в Венском матенадаране. За Советские годы первая попытка составления полной библиографии армянской периодической печати принадлежит известному филологу, большого знатока армянской периодики, профессору Гарегину Левоняну.

Он составил в 1934 году издал библиографию «Армянская периодическая печать. Полный каталог армянских газет и журналов (1794—1934)».

Настоящая библиография охватывает периодическую печать издававшуюся не только в Армении, но и в зарубежных культурных очагах. Она включает описание 1586 названий армянских газет и журналов вышедших за 140 лет.

В библиографии дается хронологический перечень периодических изданий. Большую ценность представляет справочный аппарат в конце библиографии, который дает более полное представление об армянской периодической печати. При помощи вспомогательного указателя «Армянская периодическая печать по месту ее издания», можно установить; в каких городах 22 стран мира какие газеты и журналы выходили.

При пользовании данного указателя в научной и справочной работе весьма полезны следующие вспомогательные указатели: «Алфавитный указатель армянской периодической печати», «Армянская периодическая печать по содержанию» (по тематике), «Именной указатель редакторов и издателей», «Список типографий, где издавались армянские газеты и журналы».

Наряду с достоинствами, настоящая библиография имеет некоторые пробелы и неточности. Она недостаточно полная, сотни журналов и газет не нашли в ней свое отражение, не все издания описаны «*de visu*». Несмотря на эти недостатки и некоторые погрешности методологического характера, труд Г. Левоняна и по сей день является ценным справочным пособием.

По объему и содержанию более значительным является труд известного библиографа Ованеса Петросяна «Библиография армянской периодической печати». Он состоит из трех томов и включает армянские периодические издания с 1794 по 1956 гг. В этой библиографии отчасти раскрывается содержание периодики, дается аналитическое описание в основном журнальных статей.

Общие принципы описания печати, применяемые Ов. Петросяном, оказались плодотворными и внесли новый серьезный вклад в методiku армянской библиографии. Стремясь показать в своей библиографии развитие армянской периодической печати, Ов. Петросян расположил материал в хронологическом порядке. В пределах хронологических рубрик, в порядке алфавита периодических изданий. Для дореволюционных изданий после библиографического описания автор иногда дает обстоятельные комментарии об истории возникновения, политической и идеологической направленности данного журнала или газет.

Между тем, и этой библиографии, в описаниях и вспомогательных указателях имеются ряд существенных пробелов, ошибок, неточностей.

Отсутствие таких указателей как: указатель названий периодических изданий, указатель мест изданий, указателей редакторов, издателей, типографий, — несомненно снижают ее справочную ценность.

Для данного типа библиографии, где учтено огромное количество статей, весьма необходимо иметь систематический или предметный указатель расписанных статей. В данном случае без таковых совершенно невозможно пользоваться материалами.

Однако несмотря на вышеуказанные погрешности, труд Ов. Петросяна является серьезным вкладом в армянской библиографии.

Об армянской большевистской печати имеется специальная библиография, составленная Х. А. Барсегяном: «Библиография армянской большевистской периодической печати 1900—1920» (Ереван, 1950).

В отмеченной библиографии зарегистрированы большевистские журналы, газеты, революционные листовки и прокламации за 1900—1920 гг. Кроме библиографических описаний, в ней содержатся и аналитические описания журнальных и газетных статей. Библиография носит сводный характер, в ней указывается, в каких архивах или библиотеках находятся полные комплекты того или иного издания. В работе дается библиографический список дореволюционных изданий произведений В. И. Ленина на армянском языке. Примечателен и тот факт, что составитель после библиографических описаний дает иногда обширные комментарии по истории возникновения и распространения данного издания, в также и об участии в нем видных деятелей большевистской партии.

Несмотря на проделанную работу в области библиографирования армянской периодической печати, необходимость создания полной научной библиографии армянской периодической печати все еще стоит на повестке дня. Для разрешения этой важной проблемы должны быть

сосредоточены совместные усилия сектора журналистики Института истории Академии наук Армянской ССР, Государственной республиканской библиотеки им. Ал. Мясникяна, Государственной книжной палаты Арм. ССР и Фундаментальной библиотеки Академии наук Армении.

К решению этой задачи приступила Республиканская б-ка им. Ал. Мясникяна, начав составление сводного каталога армянской периодической печати с 1794 по 1967 гг.

Как известно, составление библиографии периодической печати является исключительно трудоемкой работой, тем более армянской.

Несмотря на эти трудности, мы сделали первую попытку собрать поедино основные фонды армянской периодики в наиболее крупных библиотеках как Советского Союза, так и за рубежом.

Основой для данной библиографии служил фонд периодики Республиканской библиотеки Армении насчитывающий 1970 названий. В дальнейшем для сличения и пополнения указателя велась работа в нижеследующих крупных библиотеках Армении и других республиках Советского Союза:

Государственная Республиканская библиотека Арм. ССР. им. Ал. Мясникяна,

Фундаментальная б-ка Акад. наук Арм. ССР,

Библиотека Матенадарана,

Библиотека Ереванского государственного университета,

Книжная палата Арм. ССР,

Институт истории Акад. наук Арм. ССР,

Музей литературы и искусства им. Е. Чаренца,

Государственный исторический музей,

Библиотека Эчмиадзинской духовной семинарии,

Библиотека армянского филиала Института марксизма-ленинизма при ЦК КПСС,

Государственная библиотека СССР им. В. И. Ленина,

Государственная публичная библиотека им. Салтыкова-Щедрина,

Библиотека Ленинградского отделения восточных народов при Акад. наук СССР,

Институт марксизма-ленинизма при ЦК КПСС,

Государственная республиканская библиотека Грузии им. К. Маркса,

Центральная городская библиотека г. Тбилиси,

Государственная республиканская библиотека Аз. ССР им. М. Ф. Ахундова,

Грузинский филиал Института марксизма-ленинизма при ЦК КПСС,

Азербайджанский филиал Института марксизма-ленинизма при ЦК КПСС,

Центральная городская библиотека г. Баку.

Кроме библиотек Советского Союза, даны также сведения об армянской периодической печати, находившихся в крупных книгохрани-

сосредоточены совместные усилия сектора журналистики Института истории Академии наук Армянской ССР, Государственной республиканской библиотеки им. Ал. Мясникяна, Государственной книжной палаты Арм. ССР и Фундаментальной библиотеки Академии наук Армении.

К решению этой задачи приступила Республиканская б-ка им. Ал. Мясникяна, начав составление сводного каталога армянской периодической печати с 1794 по 1967 гг.

Как известно, составление библиографии периодической печати является исключительно трудоемкой работой, тем более армянской.

